Մեր, եկեղեցական դասուն և թրքահայ ժողովուրդի որդիական խոր ցավակցությունները և աղոթքը՝ հանգուցյալ Հայրապետի հոգվո խաղաղության: «Տէ՛ր, զեկեղեցի քո անշարժ պահեա»: Ամեն:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԶԱՆՃՅԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ

Երևան, 19 օգոստոս 1994 թ.

ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ՕՏԱՐ ԿՐՈՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՑ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱՎՅԱՆԻՆ

Ս. Էջմիածին

Այս պահին, երբ մեծ Կաթողիկոս Վազգեն Առաջինը, իր ժողովրդին մատուցած երկարատև և բեղմնավոր ծառայությունից հետո բաժանվում է մեզանից՝ մտնելու համար երկնավոր Հոր տունը, ցանկանում եմ հայտնել Ձերդ Գերաշնորհության, ինչպես և ձեր Եկեղեցու բոլոր անդամներին իմ խորագոյաց վիշտը: Աղոթում եմ Տիրոջը, որ ընդունի նրան խաղաղության և լույսի իր հավերժական օթևանում:

ՊԱՊ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ ԵՐԿՐՈՐԴ

Վատիկան, 19 օգոստոս 1994 թ.

* * *

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Ս. Էջմիածին

Խոր վշտով ընդունեցինք Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս, ձեր Եկեղեցու մեծ առաջնորդ Վազգեն Առաջինի մահվան լուրը:

Որբացած Հայ Առաքելական Եկեղեցուն Ձեր Սրբազնության միջոցով հայտնում ենք Տիեզերական Պատրիարքության և անձամբ Մեր ցավակցությունները՝ աղոթելով, որ կյանքի և մահվան Տերը Մեր ննջեցյալ Եղբոր հոգուն հանգստություն տա արդարների և հանգուցյալների երկրում: Թող Աստված օգնի ձեզ՝ արժանի հաջորդ ընտրելու գործում:

Տեղեկացնում ենք նաև, որ Կաթողիկոսի հուղարկավորության արարողությանը ներկա է լինելու Շվեյցարիայի մեր արքեպիսկոպոս Դամասկինոսը:

Ցավակցում ենք Ձեզ և եպիսկոպոսական դասի Ձեր եղբայրներին, ձեր Եկեղեցու սգակիր հոգևորականությանը և ողջ հավատացյալներին:

ԲԱՐԹՈՂՈՄԵՈՍ
ՀՈՒՆԱՑ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ

Ֆանար, 24 օգոստոս 1994 թ.

* * *

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

Ս. Էջմիածին

Սիրելի եղբայրներ, մեծ վշտով ընդունեցինք Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Առաջինի մահվան լուրը: Ցավակցում ենք Հայ Առաքելական Եկեղեցուն, որը կորցրեց չորս տասնամյակներից ի վեր իրեն կառավարող իր իմաստուն և շնորհալի ղեկավարին:

Իր գործունեության ողջ ընթացքում նա պահպանեց և զարգացրեց Հայ Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցու եղբայրական կապերը: Նրա պայծառ հիշատակը մենք միշտ կպահենք մեր սրտերում:

Աղոթում ենք ողորմած Աստծուն, որպեսզի հանգստություն ուղարկի ննջեցյալին:

ԱԼԵՔՍԻ Բ
ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ

Մոսկվա, 18 օգոստոս 1994 թ.

* * *

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

Ս. Էջմիածին

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի մահվան լուրը մեծ ցավ պատճառեց մեզ: Մոտ 39 տարի շարունակ նա ղեկավարում էր Հայ Առաքելական Եկեղեցին խոհեմությամբ և խորաթափանցությամբ: Գերագույն հաճույք ստացա նրա հետ ունեցած իմ հանդիպումից անցյալ տարի Էջմիածնում:

Խնդրում եմ հաղորդել իմ ցավակցությունները և աղոթքները Հայ Առաքելական Եկեղեցու բոլոր անդամներին:

ՋՈՐՋ ԿԱՐԵՅ
ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ,
ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Լոնդոն, 19 օգոստոս 1994 թ.

* * *

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

Ս. Էջմիածին

Խորապես ցավում եմ Հայ Առաքելական Եկեղեցու մեծ առաջնորդի և իմ թանկագին ընկերոջ մահվան առթիվ: Նրա սրբակյաց վարքը և հյուրընկալությունը Աստծուն մոտ կանգնած և նրա բոլոր զավակներին սիրող անձնավորության հատկանիշներ էին: Նա նվիրեց իր կյանքը աշխարհով մեկ սփռված հայորդիների համար Աստծու կամքը կատարելու սուրբ գործին: Կինս և ես աղոթում ենք նրա և հավատացյալ Հայաստանի համար:

ԼՈՐԴ ՌՈԲԵՐՏ ՌԱՆՍԻ
ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ՆԱԽԿԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Լոնդոն, 19 օգոստոս 1994 թ.

* * *

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱՎՅԱՆԻՆ

Ս. Էջմիածին

Արտահայտելով Մեր խորազգաց վիշտը Նորին Սրբություն Վազգեն Առաջինի վախճանման առթիվ՝ հղում ենք Մեր անկեղծ ցավակցությունները և ջերմորեն աղոթում Աստծուն, որ հանգուցյալ Կաթուղիկոսի հոգուն շնորհի հավիտենական հանգիստ, իսկ Ձեզ՝ միսիթարություն, իմաստություն՝ քաջաբար աշխատելու ի բարգավաճումն և հառաջդիմություն հայ ազգիվ հավատացյալների:

ԴԻՈԴՈՐՈՍ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՊԱՂԵՍՏԻՆԻ
ՀՈՒՆԱՑ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ

Երուսաղեմ, 29 օգոստոս 1994 թ.

* * *

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱՎՅԱՆԻՆ

Ս. Էջմիածին

Անկեղծ ցավակցություններ ենք հայտնում անմոռանալի Կաթողիկոս Վազգեն Առաջինի վախճանման առթիվ: Թող Աստված լինդունի նրա հոգին

սրբերի դասում և Հայ Առաքելական Եկեղեցուն շնորհի արժանավոր մի հաջորդ:

ՊԱՐԹԵՆԻՈՍ
ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՖՐԻԿԱՅԻ
ՊԱՊ ԵՎ ՊԱՏՐԻԱՐՔ

Կահիրե, 26 օգոստոս 1994 թ.

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒՆ

Ս. Էջմիածին, Հայաստան

Մեծ և խոր տխրությամբ ու վշտով է, որ ստացանք Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Վազգեն Առաջինի մահվան լուրը:

Մենք բոլորս գիտենք, որ նրա մահը մեծ կորուստ է ոչ միայն ձեր Եկեղեցու, այլ նաև աշխարհում համայն Ուղղափառ Եկեղեցու համար:

Այստեղ հայտնում ենք մեր վշտաբեկ սրտի խորունկ զգացումները, մեր սրտագին համակրանքն ու ցավակցությունները: Մենք միշտ կհիշենք նրան մեր աղոթքներում:

Թող նրա հիշատակն օրհնյալ լինի և երկար պահպանվի:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ԹԵՈԿՏԻՍՏ
ՊԱՏՐԻԱՐՔ ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ

Բուխարեստ, 20 օգոստոս 1994 թ.

* * *

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

Ս. Էջմիածին

Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Վազգեն Առաջինի մահվան առթիվ հայտնում ենք մեր անկեղծ վշտակցությունը: Թող Տերը հավերժական հանգիստ պարգևի նրա հոգուն իր երկնային արքայության մեջ, որ չկա ո՛չ ցավ, ո՛չ կսկիծ, ո՛չ հառաչանք, այլ միայն խաղաղություն և կյանք հավիտենական:

ՄԱՔՍԻՄ
ԲՈՒԼՂԱՐ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ

Սոֆիա, (Բուլղարիա), 21 օգոստոս 1994 թ.

* * *

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ
ՆՈՐԻՆ ԳԵՐԱՇՆՈՐՀՈՒԹՅՈՒՆ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱՂՅԱՆԻՆ

Կաթողիկոսարան Ամենայն Հայոց, Ս. Էջմիածին

Ձերդ Սրբազնություն,

Մեզ հասավ վշտալի լուրը, որ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը հանգյավ ի Տեր: Արևելյան Ասորական Եկեղեցու Սուրբ Սինոդի, հոգևորականության և հավատացյալների անունից մեր խորին ցավակցություններն ենք հայտնում Ձեզ և համայն հայ ժողովրդին՝ ջերմագին աղոթքով, որ հանգուցյալ Կաթողիկոսի հոգին իր խաղաղ օթևանը գտնի Աստծու՝ Հավիտենական Հոր մոտ:

Թող մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, խաղաղությամբ առաջնորդի Հայ Եկեղեցին այսօր և ընդմիշտ:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ԽԱՆԱՆԻԱ ՄԱՐԴԻՆԻԱ
ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՍՈՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ

19 օգոստոս 1994 թ.

* * *

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱՂՅԱՆԻՆ

Ս. Էջմիածին

Նորին Սուրբ Օծություն Վազգեն Առաջին Կաթողիկոսի վախճանման առթիվ խոր ցավակցություններ ենք հայտնում Հայ Առաքելական Եկեղեցու պատրիարքներին, եպիսկոպոսներին, հոգևոր դասին և ողջ հայ հավատացյալներին: Քրիստոնյա աշխարհում նա ճանաչված, հարգված և մեծ հեղինակություն վայելող անձնավորություն էր: Մենք աղոթում ենք, որ երկնային օրհնությունները տեղան նրա վրա, որպեսզի նա միանա լուսավորյալների խմբին ի Տեր:

Աստծու ողորմությամբ՝

ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀՆԴԿԱԿԱՆ ՄԱԼԱԲԱՐ
ԵԿԵՂԵՑՈՒ

Հնդկաստան, 21 օգոստոս 1994 թ.

* * *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆԸ

Ս. Էջմիածին

Խորին վշտով ընդունեցինք Վեհափառ Հայրապետի մահվան լուրը: Աղոթում ենք Աստծուն, որ խաղաղություն ուղարկի հանգուցյալի հոգուն:

ՍԵՐԱՖԻՄ
ԱԹԵՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀԵԼԼԱԴԱՅԻ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Աթենք, 19 օգոստոս 1994 թ.

* * *

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Ս. Էջմիածին

Ստացանք Ձեր հեռագիրը: Խորը վշտով ընդունեցինք մեր հոգևոր եղբոր՝ Նորին Սրբություն Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի մահվան լուրը: Նրա վախճանը մեծ կորուստ է քրիստոնյա Եկեղեցու համար: Մենք միշտ կհիշենք նրա արժեքավոր ներդրումը էկումենիկ շարժման մեջ: Մեր Սուրբ Սինոդի հոգևորականները և Սիրիայի ուղղափառ Եկեղեցին բաժանում են Ձեր տխրությունը և արտանց ցավակցում Հայ Եկեղեցուն: Թող Աստված մխիթարի Ձեզ և հանգստություն տա նրա հոգուն երկնքում մեր ննջեցյալ սուրբ հայրերի հետ:

ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔԱՔԱ Ա
ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ
ՍԻՐԻԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ
ՊԱՏՐԻԱՐՔ

Դամասկոս, 22 օգոստոս 1994 թ.

* * *

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻՆ

Ս. Էջմիածին, Հայաստան

Խոր վշտով իմացանք Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Վազգեն Առաջինի մահվան լուրը: Մենք նրան ճանաչեցինք և մեծապես գնահատեցինք, երբ առիթ ընծայվեց Մեզ պաշտոնապես այցի գնալու Ս. Էջմիածնի Կաթողիկոսարան: Բաժանում ենք Ձեր

վիշտը և աղոթում Տիրոջը, որ հանգուցյալ Կաթողիկոսին շնորհի արքերին խոստացված վարձատրությունը:

ՄԱՔՍԻՄՈՍ Ե
ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՐԻԱՐՔ

Դամասկոս, 28 օգոստոս 1994 թ.

* * *

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

Ս. Էջմիածին, Հայաստան

Կովկասի ժողովուրդների բարձրագույն կրոնական խորհրդի և իմ անունից հայտնում եմ խորին ցավակցություններ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի մահվան առթիվ:

Ճանաչելով հանգուցյալին երկար տարիներից ի վեր և փոխանակելով նրա հետ կարծիքներ մեր ժողովուրդների համար այժմեական հարցերի շուրջ, համոզվեցինք, որ Սրբազան Պատրիարքը երկրային կյանքի ամենակարևոր արժեքն էր համարում խաղաղությունը և բարի կամեցողությունը մարդկանց միջև՝ անկախ դավանանքից և ազգությունից:

Մեր բոլոր հանդիպումներն ու զրուցները Նորին Սրբության հետ տոգորված էին այդ ոգով: Նա ի սրտե ցանկանում էր վերականգնել հայերի և ադրբեջանցիների միջև խաղաղ և բարիդրացիական հարաբերությունները, ցանկանում էր, որ մեր երկրներում տիրեն խաղաղություն և անդորր: Հանգուցյալ հոգին կհրճվի, եթե այդ ցանկությունները իրականանան:

Վազգեն Առաջին Կաթողիկոսի մահվան կապակցությամբ Ձեզ մխիթարություն կարող է տալ միայն Երկնային Արարիչը, որին մենք աղերսում ենք, որ մեզ չզրկի իր ողորմածությունից:

Խոր վշտով՝

Ա. ՓԱՇԱՋԱԴԵ
ԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ
ԿՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Մոսկվա, 26 օգոստոս 1994 թ.